ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.09.2025

Սիրելի՛ աշակերտներ, ուսուցիչներ և ծնողներ

Սրտանց շնորհավորում եմ Գիտելիքի օրվա և նոր ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ:
Սա տոն է, որը մեզ հիշեցնում է՝ կրթությունը անհատի և ողջ հասարակության զարգացման հիմնական ուղին է: Յուրաքանչյուր ուսումնական տարի նոր հնարավորություն է՝ բացահայտելու կարողությունները, նոր բան սովորելու և առաջ շարժվելու երազանքների ուղղությամբ:
Շնորհավորում եմ հատկապես առաջին դասարանցիներին, որոնց համար այս հիշարժան Սեպտեմբերի 1-ին սկսվում է գիտելիքների աշխարհ տանող հետաքրքիր ու պատասխանատու ուղին. թո՛ղ որ դպրոցում ամեն օրը ձեզ համար լինի ուշագրավ և բեղուն:
Սիրելի՛ մանկավարժներ, անգնահատելի է ձեր աշխատանքը. դպրոցներում կրթվող նոր սերնդի հաջողությունն ու նաև մեր հայրենիքի վաղվա լուսավոր օրը կախված են ձեր իմաստնությունից, համբերությունից, նվիրվածությունից և արհեստավարժ աշխատանքից:
Ծնողներին մաղթում եմ, որ այն ջանքերը, որ այսօր ներդնում են՝ հուսալի հենարան դառնալով իրենց երեխաների համար, աջակցելով նրանց կրթության և նվաճումների առաջին քայլերին՝ պարգևատրվեն զավակների հաջողություններով և երջանիկ կյանքով:
Իսկ պետությունն այսօր իր մշտական ուշադրության ու հատուկ հոգածության ներքո է պահում կրթական համակարգը՝ ձգտելով ստեղծել առավելագույն հարմարավետ ու ժամանակակից պայմաններ մեր երեխաների համար. այս պահին Սյունիքի մարզում ընթացքի մեջ են 28 նոր դպրոցների կառուցման և 9 դպրոցների հիմնանորոգման աշխատանքները: Նոր բացվող դպրոցները հագեցվում են նոր գույքով, համակարգիչներով, լաբորատորիաներով, սարքավորումներով՝ բարենպաստ միջավայր ստեղծելով կրթության և գիտության զարգացման համար:
Այս տոնական օրը աշակերտներին մաղթում եմ թարմ գիտելիքներ ձեռք բերելու ամենօրյա ձգտում, դրանք յուրացնելու համառություն, հարգանք և երախտագիտություն ուսուցիչների հանդեպ: Դպրոցում գրանցած բարձր արդյունքները կօգնեն հասնել ապագայի նպատակներին՝ աշխատել, արարել, հաղթել՝ հանուն անձնական երջանկության, հանուն մեր երկրի և Սյունիքի բարօրության:
Թո՛ղ նոր ուսումնական տարին բոլորի համար լինի արգասաբեր ու խաղաղ, լի՝ կրթական հաղթանակներով ու զարգացում բերող նորարարությամբ, ստեղծագործական գաղափարներով, ապագայի նկատմամբ վստահությամբ:
Շնորհավո՛ր Սեպտեմբերի 1, բարի՛ երթ 2025-2026 ուսումնական տարվան: